

Միհրան Տամատյանը և 1920 թ. օգոստոսի 4-ի ինքնավարության հռչակումը

Մարգարյան Ս. Թ.

առաջատար գիտաշխատող, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
sargsyansuren@yandex.ru

Բանալի բառեր՝ Կիլիկիա, անկախություն, հովանավորություն, Հայկական լեգեոն, Ազգային պատվիրակություն, դիվանագիտություն, պայքար:

Мигран Таматян и провозглашение автономии от 4 августа 1920 г.

Саргсян С. Т.

Институт истории НАН РА (Ереван, Армения)
sargsyansuren@yandex.ru

Аннотация. Чудом спасенные от Геноцида осколки армянского народа после жестоких испытаний, с надеждой на спасение нашли пристанище в Киликии, находящейся под покровительством Франции. Однако под покровительством захвативших власть кемалистов и при попустительстве французских военных властей турки периодически нападали и беспощадно уничтожали киликийских армян.

Не видя другого выхода после принятия всех возможных мер, армяне во главе с полномочным представителем национальной делегации Миграном Таматяном 4 августа 1920 года провозгласили Киликию независимой республикой под покровительством Франции.

В результате геополитических перемен и безразличия Великих держав, ставивших свои интересы превыше всего, эта республика просуществовала всего несколько часов, но она оставила большой след в нашей истории, из которого мы должны извлечь уроки.

Ключевые слова: Киликия, независимость, покровительство, Армянский легион, Национальная делегация, дипломатия, борьба.

Mihran Tamatyan and the Proclamation of Autonomy of August 4, 1920.

Sargsyan S. T.

Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)
sargsyansuren@yandex.ru

Summary The fragments of the Armenian people, who miraculously survived the Genocide, with the hope of salvation, found refuge in Cilicia, which was under the protection of France. However, under the patronage of the Kemalists who seized the power and with the connivance of the French military authorities, the Turks periodically attacked and mercilessly destroyed the Cilician Armenians.

Seeing no other way out after taking all possible measures, the Armenians, led by the Plenipotentiary representative of the national delegation, Migran Tamatyan, declared Cilicia an independent Republic under the patronage of France on August 4, 1920.

As a result of geopolitical changes and the indifference of the Great powers that put their interests above all else, this Republic lasted only a few hours, but it left a big mark on our history, from which we need to learn.

Keywords: Cilicia, independence, patronage, Armenian Legion, national delegation, diplomacy, struggle.

Սովորաբար նշանավոր անձանց կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություններում դրանց հեղինակները գովաբանում, գունագարդում, իսկ երբեմն էլ՝ ուղղակի սևացնում են նրան: Ովքեր անդրադարձել ու խոսք են ասել Մ. Տամատյանի մասին, որպես կանոն դրական են արտահայտվել: Մի բան, որ մեզանում այնքան էլ հաճախ չի պատահում և վկայում է այն մասին, թե ինչպիսի խելացի, հավասարակշռված ու լայն մտահորիզոնի տեր գործիչ է եղել նա: Մարդ, ով վայելել է ժամանակակիցների վստահությունը, կարո-

ղացել է վեր կանգնել կուսակցական և գաղափարական սահմանափակումներից, հավատացել հայության լուսավոր ապագային և անմնացորդ ծառայել հանուն դրա իրականացման:

Տեխական ուժին կործնելու գաղափարներով տոգորված արևմտահայ ազգային-ազատագրական շարժումն իր գլխավոր նպատակը համարեց նախ՝ կրթել, միջնադարյան խավարից դուրս բերել ժողովրդին և ապա՝ պայքարել նրա ազատության համար: Արդյունքում մեծացավ մի սերունդ, որն այլևս գրագետ էր, կարդացած և

տեղյակ էր եվրոպաներում ընթացող կարևոր իրադարձություններին ու հեղափոխական-ազատագրական ոգորումներին: Մ. Տամատյանն այդ սերնդից էր: “Ճգնեցեք, - իրավամբ գրում է Վ. Ղազարյանը, - գրել պատմությունը 19-րդ դարու աւարտին եւ 20-րդ դարու սկիզբը Արևմտահայաստանի ու Կիլիկիոյ մեջ ծաւալած ազգային ազատագրական շարժումներուն: Ձեր դիմաց պիտի գտնեք անպայման Տամատեանը՝ իբրև արձանացեալ խորհրդանիշը մտաւորական հեղափոխականի եւ աննահանջ կազմակերպիչը դիմադրական թէ կամաւորական շարժումներու” [5, էջ 7]:

Գործիչ, որը նշանակալի ներդրում է ունեցել հետևյալ ոլորտներում: Նա՝

1. կրթության գործի նվիրյալ-մանկավարժ էր,
2. ազատագրական պայքարի գաղափարախոս և պրոպագանդիստ,
3. հեղափոխության և ինքնապաշտպանության կազմակերպիչ,
4. կուսակցական գործիչ, հիմնադիր, ղեկավար, ծրագրերի հեղինակ,
5. Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ, Կիլիկիայի հանրապետության հռչակման նախաձեռնող և վարչապետ,
6. ռամկավար մի քանի պարբերականների հիմնադիր-տեսաբան,
7. հրապարակախոս, ազգապահպանության ջատագով,
8. բանաստեղծ-լեզվաբան և այլն:

Գործիչ, ով անկասկած մեր պատմության «ազատագրական, հասարակական և մտաւորական բովանդակութիւն տուող ռահվիրաներու փաղանգէն է» [6] և երիտասարդությունից “մինչեւ այլեւեր տարիքը ցուցաբերեց ամբողջական նուիրում, հաւատք մեր ժողովուրդի պայծառ ապագային հանդէպ” [23, թիվ 15706]: Մթափ միտք ուներ, մեծ սիրտ և զգայուն հոգի, որոնք համադրված էին գեղեցիկ առնական մարմնում: Մինչև վերջին շունչը քննադատող, խորաթափանց և պրակտիկ գործիչն ու կազմակերպիչ ղեկավարը հավատարիմ մնաց ազատագրական շարժմանն ու իր սկզբունքներին: Նա ուղղամտության, պարկեշտության և ճշմարտության ջատագովն էր, անշահախնդիր ու “անանձնական նուիրումով ազատագրական շարժման ճիշդ ուղին ըմբռնող և զայն գործադրող” անձնավորություն [7]:

Մ. Տամատյան գործիչն առանձնանում է նաև նրանով, որ նրա կյանքի ու գործունեության մասին պահպանվել են զգալի թվով արխիվային վավերագրեր [1; 2; 3], նամակներ¹, անդրադարձներ հուշագրություններում [5], մամուլում հրա-

պարակումներ²: Ու չնայած նյութերի այս առատությանը, Պ. Տեփոյանի շահեկան աշխատությունից [8] և մի քանի անուղղակի անդրադարձներից [9; 10; 11; 12] բացի Մ. Տամատյանի գործունեության պատմությունը դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից և կարոտ հիմնարար ու ամփոփ ուսումնասիրության:

Աննկուն հեղափոխականը, քաղաքական գործիչն ու հայրենասեր մտավորականը գերազանցապես գործի մարդ էր, նաև՝ խոսքի վարպետ: Ծնվել է 1863 թ.³ Կ. Պոլսում (հայրը՝ Մերովբե, մայրը՝ Թագուհի): Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում, այնուհետև՝ 1872-1880թթ. Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում. “Պեշիկթաշեանի, Ա. Արփիարեանի, Մ. Մամուրեանի հետ հայրենաստերն Հ. Ալիշանի մականին տակ”: Այստեղ նա ստանում է հայրենասիրության դասեր, որոնք դարձան ապրելու կերպ և գործելու ուղեցույց ամբողջ կյանքի ընթացքում: “Ալիշանեան հայրենասիրութեանը” գուզընթաց նա որոշ չափով հետևել և ազդվել է նաև Եվրոպայում տարածում գտած ազատագրական շարժումներից:

Վերադառնալով Մ. Տամատյանն ուսուցչություն է անում Կ. Պոլսի, այնուհետև Աղանայի տարբեր վարժարաններում: Հատկանշական է, որ դեռ աշակերտական տարիներից նա համակրել է հակահատուկյաններին, իսկ նրա երիտասարդությունը համընկավ արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների գնահատման և զարթոնքի իրադարձություններին, հասարակական կյանքում ձևավորվող առաջադիմական և հետադիմական խմբակցությունների անգիջում պայքարի ժամանակաշրջանին:

Աննկուն հեղափոխականն ու նվիրյալ կուսակցականը

Մ. Տամատյան նվիրյալի հեղափոխական գործունեությունը կարելի է բաժանել երկու կարևոր ժամանակահատվածների՝ մինչև կուսակցական և կուսակցական: Ընդ որում, մինչև կուսակցական շրջանում նրա գործունեության հիմնական էությունը տարբեր վարժարաններում մանկավարժական գործու-

² Տե՛ս «Արև», «Չարթոնք», «Փիւնիկ», «Պայքար», «Նոր Օր», «Ազգ», «The Armenian merior newspaper» և այլ թերթեր:

³ Մեկ երբայր ուներ և երեք քույր: Պ. Տեփոյանը ծննդյան թվական է նշում 1863-ը: Իսկ Վաչե Ղազարյանի լույս ընծայած «Իմ յուշերէս»-ում, թերթերում նրան նվիրված հրապարակումներում (տես «Արև», թ. 5630, 1937, 18.08.1945) և Ա. Յափուճյանի հեղինակած հոդվածներում նշվում է 1864 թվականը: Անձնական դիտարկումների, համեմատությունների և վերլուծությունների արդյունքում հակված ենք կարծելու, որ ճիշտը 1864 թվականն է:

¹ Մեծ թվով հայերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով նամակներ կան վերը նշված արխիվներում:

նեությանը զուգընթաց քարոզչական-կազմակերպական և հայության կյանքում եղած թերությունների և հարստահարությունների լուսաբանումն էր: “Երիտասարդ Տամատեանը ձգելով Կ.Պոլսոյ հանգստաւէտ և ապահով կեանքը՝ կը մեկնի Տարոն, կը մեկնի Կիլիկիա” [13] և ժողովրդի գիտակցությանն այդպես այլևս շարունակել ապրելու անհնարինության գաղափարի սերմանումը, թուրքական իշխանությունների ապօրինի գործունեության և քրդական հրոսակների թալանչիական պահվածքի քննադատությունը:

1884 թ. Միացյալ ընկերության հրավերով Մ. Տամատյանն իբրև Ներսիսյան դպրոցի տնօրեն մեկնում է Մուշ: 1886թ. Մկրտիչ Մարյանի և Մարկոս Նաթանյանի ձեռքակալությունից հետո Մ. Տամատյանը ստանձնում է Տուրուբերանի, Վասպուրականի վարժարանների տեսուչի պաշտոնը: Այստեղ նա տեսավ և իր մաշկի վրա զգաց հայ ժողովրդի ծանր ու անտանելի վիճակը: Հասկացավ, որ նախորդ դարերի նման ժողովուրդը կրելով այդ ծանր լուծը վերածվել էր կամագուրկ ամբոխի և հանգեց այն եզրակացության, որ հարկավոր է դրա դեմ պայքարել և այն էլ զենքով: Կրթական գործի նվիրյալն աստիճանաբար դարձավ “գինական ազատագրական գաղափարներու ձեւաւորուած ոգիին առաքեալը” [6] և դաժան պայքարի կազմակերպիչը: Նա 1886թ.-ից որդեգրեց հեղափոխության ուղին [15, էջ 153-154]:

Ազգային-ազատագրական պայքարի առաջին՝ դարավոր թմբիկից սթափվելու և հեղափոխական գաղափարների շուրջ համախմբվելու փուլին աստիճանաբար փոխարինելու էր գալիս երկրորդ՝ ազատության դրոշը պարզելու փուլը: Դրա արդյունքում ուսումնառող ու դաստիարակությունն աստիճանաբար դարձան աշխարհիկ, վանական վարդապետն սկսեց տեղը զիջեց աշխարհիկ ուսուցիչ-վարժապետին: Փոխվեց նաև ուսուցանվողը, ով հետո պիտի փոխեր մյուսներին, պիտի փոխվեր հայության կյանքն ընդհանրապես: Այդ էվոլյուցիայի արդյունք երկրորդ՝ գաղափարաքարոզչական և պրակտիկ գործունեության պայքարի փուլը դարձակետ եղավ նաև Մ. Տամատյանի ճակատագրում՝ կրթական գործի մշակը դարձավ պայքարի քարոզիչ և հեղափոխական գործի կազմակերպիչ և [16, էջ 41 և 48] իր կյանքը նվիրեց սեփական ժողովրդի ազատության սրբազան գործին:

Մ. Տամատյանը արևմտահայ ազգային-ազատագրական շարժման “յեղափոխական գաղափարին խանձարուր” երեք օջախ էր առանձնացնում և դրանք վառարաններ անվանում՝ Վանի, Կարինի և “Բաղէշի (Մուշ, Մասուն)” վիլայեթները [5, էջ 30]: 1886թ. նա մեկնում է Վան, որտեղ ծանոթանում է տեղի

ազատախոհ շրջանակների հետ. “Հոն, **Արմենական կազմակերպութեան միանալով** հայ ազատագրութեան շարժումին իր գործնական մասնակցութիւնը բերած է: Յետոյ Պոլիս վերադառնալով յիշեալ կազմակերպութիւնը զօրացնելու կ’աշխատեր” [17]: Ի դեպ, այս հետաքրքիր տեղեկությունը երբևէ չի շրջանառվել: Ավելին, հիշյալ հրապարակման մեջ նշվում է նաև, որ ոչ միայն Մ. Տամատյանն է եղել Արմենական կուսակցության անդամ, այլև՝ Մուրադը. “**Տամատեան և Մուրատ պատկանելով հանդերձ Արմենական կազմակերպութեան**”⁴ միաժամանակ Աթենք հրատարակող նոր թերթ մը, “Հնչակ”ը կը ստանային” [17], որի “կուռ և դէպի յեղափոխութիւն հրավատ խմբագրականները” ավելի գրավիչ և սրտամոտ լինելով շուտով գրավում են նրանց և դարձնում իրենց հետևորդներ: Հետագայում Մ. Տամատյանը նշում է, որ Վանը “գարգացած եւ եռանդուն” երիտասարդություն ուներ և “խառնարան մըն էր, տրամադիր յեղափոխական յանդուգն ձեռնարկներու” [5, էջ 31]: Բայց նաև ավելացնում, որ նրանց ղեկավարներից Մ. Փորթուգայանը հետագայում “յեղափոխական գինիին մէջ շատ ջուր խառնած էր” [5, էջ 27]:

Մուշում պաշտոնավարող ազատատենչ Մ. Տամատյանն անխուսափելիորեն բախվեց տեղի ցեղերի՝ կուսակալ Արիֆ և Մուշի կառավարիչ Մալիի փաշաների, Մշո սուրբ Կարապետի առաջնորդ եպիսկոպոս Արիստակես Դերձակյանի և ավագակապետ Մուսա բեկի հետ, որոնք “կատարեալ աւագակախումբ մը կազմած սանձարձակ եւ բացէ ի բաց կը կողոպտէին ժողովուրդը” [5, էջ 31]: Այն աստիճան, որ նույնիսկ Մուշի թուրքերն էին դժգոհ տիրող կացությունից: Երբ Մ. Տամատյանը կազմակերպեց տեղի հայերի միասնական բողոքը Մուսա բեկի դեմ, նրան աջակցեցին Մշո Ներսիսյան վարժարանի ուսուցիչ Հայրապետ Չանիկյանը, Ազգային Առաջնորդարանի քարտուղար Գեղամ Տարոնյանը և շարքային շատ քաղաքացիներ [5, էջ 34]:

Մուշից հեղափոխական խմորումներ ապրող Կ.Պոլիս երադառնալով, հեղափոխականորեն տրամադրված Մ. Տամատյանը հարաբերություններ է հաստատում Համբարձում Պոյաճյանի (Մուրադ), Հարություն Ճանկույանի և այլ հեղափոխական ընկերների հետ: Արդյունքում ձևավորվում է “Պոլսոյ ամենէն գործունէայ և եռանդուն խումբը” [15, էջ 153-

⁴ Կուսակցության անդամ լինելու փաստին որոշ վերապահումով պիտի մոտենալ, քանի որ նա Վանում մնաց ընդամենը ութ օր և հագիվ թե հասցնել լիովին ընկալել արմենականների գաղափարները և անդամագրվել կուսակցությանը: Այլ խնդիր է, որ հայ ազատագրական պայքարի նվիրյալը դառնար արմենականների համախոհը, համակիրն ու աստարեր նրանց:

154], որի նպատակն էր նախ՝ «Արեւմտահայաստանի և Կիլիկիոյ մեջ հեղափոխական գործունեութեամբ ապահովել Պերլինի դաշնագրով խստացուած բարենորոգմանց գործադրութիւնը» [5, էջ 83], այնուհետև նվաճել ազգային անկախություն:

1889թ. վերջերին նորաստեղծ Հնչակյան կուսակցության կենտրոնի ներկայացուցիչները ժամանում են Կ. Պոլիս և բանակցում տեղի հեղափոխականորեն տրամադրված շրջանակների հետ: Այդ բանակցությունների արդյունքում էլ Մ. Տամատյանն ընկերների հետ անդամագրվում են Հնչակյան կուսակցությանը: Սակայն նրանցից շատերը տեղյակ չէին կամ լավ չէին հասկանում սոցիալիստական գաղափարախոսությունը: Պարզապես նրանք պաշտպանում էին այն ուժին, որը կայաքարեր կործանման եզրին հասած հայության փրկության համար: Ասվածի հաստատումն էր այն, որ սկզբնական շրջանում Հնչակյան կուսակցությունն աննախադեպ հաջողություններ արձանագրեց այդ ասպարեզում:

Նորագիր հնչակյանն ամենակտիվ մասնակցություն է ունենում 1890 թ. հուլիսի 15-ին կազմակերպված Գում Գափուի ցույցին [18, էջ 140-141] և խուսափելով հետապնդումներից Մ. Տամատյանը գիշերով ծածուկ հեռանում է Կ. Պոլսից և առժամանակ հաստատվելով Աթենքում՝ «անընդհատ ճիգ քրաւ հոն քաղաքական քարոզչութիւն ընելու և կազմակերպական աշխատանք տանելու» [23, թիվ 15706]:

1891թ. Հնչակյան կենտրոնի որոշմամբ որպես հեղափոխական գործիչ Տամատյանը մշեցի բեռնակրի Մելքոն Խուրշիդ կեղծ անվան տակ մեկնում է Սասուն, շրջում շատ բնակավայրերով, ամենուրեք գաղտնի հանդիպումներ ունենում տեղի ազատախոհ գործիչների հետ: Քարոզչական արդյունավետ աշխատանքի արդյունքում ձևավորվում է Մուշի Հնչակյան կազմակերպությունը: Այդ գործում ժամանակակիցների վկայությամբ պակաս դերակատարություն չունեին Տամատյանի առինքնող արտաքինը, լեզուների փայլուն իմացությունը, խելացի, զարգացած լինելու և շատ գրքեր կարդացած լինելու հանգամանքը:

Զմռան դժվարին պայմաններում հաղթահարելով ցուրտն ու սառնամանիքը՝ Մ. Տամատյանն այցելում էր գյուղից գյուղ, բացատրում հայերի համար ստեղծված բարդ իրավիճակը, համոզում էր նրանց համախմբվել, պաշտպանել միմյանց քրդերի հարձակումներից և զինվել՝ չխնայելով դրա համար ոչ մի բան: Նրա ջանքերի շնորհիվ հարթվում են հայկական գյուղերի միջև շատ հակասություններ և «միաբանութիւն յառաջ եկաւ»:

Թուրքական իշխանություններն ուշի ուշով հետևում էին հայերի քայլերին և ձեռնարկում էին պատժիչ գործողություններ նրանց դեմ: Օրեցօր ահագնանում էր վտանգը հատկապես ազատատենչ Սասունի հայության համար: Այդ շրջանում ձևավորվել էր նոր դիմադրական շարժում, որի գործնական ու գաղափարական առաջնորդի դերը ստանձնել էին Մ. Տամատյանը, Հ. Պոյաճյանը, Ա. Ղազարյանը, Գ. Չաուշը: Նրանք կազմակերպում են ֆիդայական խմբեր, պատժում մատնիչներին և վատահամբավ կառավարիչներին: Ամենուրեք Մ. Տամատյանն զգուշության կոչ էր անում և մերժում հնչակյանների ցուցադրական գործողությունները և սադրիչ թռուցիկներ տարածելը, համարելով դա կարճատեսություն և «հիմարական» արարք, որը գրգռում էր իշխանություններին և ավելորդ առիթներ տալիս հայերի դեմ բռնությունների սաստկացման համար:

Կառավարությունը պատրաստվում է հայերին պատժելու նպատակով 1893թ. մայիսին Մուշից գորք ուղարկել Սասուն: Վտանգը կանխելու, յուրաքանչյուրի անելիքը հստակեցնելու և հետագա քայլերը որոշելու նպատակով Տալվորիկի անտառում տեղի է ունենում Մ. Տամատյանի, Հրայր Դժոխքի և Սասունի երևելիների գաղտնի ժողով և որոշվում գործել միասնաբար և ընդդիմանալ կառավարությանը: Որոշվում է Մշո դաշտի հայությանը ևս նախապատրաստել անհրաժեշտության դեպքում Սասունին օգնության հասնելու և ինքնապաշտպանվելու համար: Մուշի գյուղացիությանը հավանական այդ կոչին նախապատրաստելու առաքելությամբ Տամատյանն իջնում է Մշո դաշտի Գոմեր, Ղզաղան Արաղ, Բերդակ, Վարդենիս և այլ գյուղեր, ներկայացնում իրավիճակի լրջությունը և համոզում նրանց պատրաստ լինել միմյանց օգնելու և ինքնապաշտպանվելու:

Հերթական քարոզչակազմակերպչական շրջայցերից մեկի ժամանակ Մ. Տամատյանը քրդերի կողմից դավադրաբար ձերբակալվում և հանձնվում է թուրքական ոստիկանությանը [8, էջ 54-66]⁵: Սկզբում պահվում է Մուշի բանտում, այնուհետև տեղափոխվում է Բիթլիսի բանտը: Տեղափոխման ժամանակ դեպքերի աննպաստ զարգացման արդյունքում Տամատյանի առջևից քայլող ոստիկանի ձին հարվածում ու կոտրում է Տամատյանի աջ սրունքը: Կարողանալով ճիշտ մարտավարություն ընտրել Տամատյանը, բացառությամբ արդեն զոհվածների, հարցաքննությունների ընթացքում չի մատնում ընկերներից

⁵ Հանգամանքների այդ աննպաստ հաջողականության և Տամատյանի ձերբակալության պատմությունը մանրամասն նկարագրված է Պ. Տեփոյանի վերոնշյալ աշխատության մեջ:

ոչ մեկին: Նրան մեղադրանք է առաջադրվում քր. օր.-ի 155-րդ հոդվածով, որով սովորաբար մահվան դատավճիռ էր արձակվում: Սակայն խելացի ինքնապաշտպանվելու արդյունքում 1894 թ. մայիսի վերջերին, կայսեր հրամանով ներում է շնորհվում Մ. Տամատյանին:

Ազատվելուց հետո կարճ ժամանակահատված կուսակցական ընկերները վերապահումով են վերաբերվում Մ. Տամատյանին: Իսկ վերջինս չէր կարող բացահայտել իր ազատման հանգամանքները, քանի որ իշխանությունները շարունակում էին ակնդետ հետևել նրան: Ի վերջո, հանդիպելով նախկին ընկերներից Բարեպաշտին (Անդրեաս Մկրյան), Տամատյանը բացատրում է խնդիրը: Դրանից հետո փոխադարձ վստահությունն ամբողջովին վերականգնվում է և Հնչակյան կենտրոնը գաղտնի կապ է հաստատում Տամատյանի հետ:

Սուլթանն օգտվելով մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններից հունիսի 3-ին մերժում է մայիսյան նախագիծը, որի դեմ սեպտեմբերին Հնչակյան կուսակցությունը խաղաղ ցույց կազմակերպեց Կ. Պոլսում: Ցույցի մասնակիցները գնում են դեպի Բարը Ալի Մ. Տամատյանի կողմից հայերեն և ֆրանսերեն լեզուներով գրված պահանջագիրը սուլթանին հանձնելու համար: Ցուցարարների և ոստիկանության միջև բախում է տեղի ունենում: Սպանվում են շուրջ 15 ոստիկան և 60 հայ [4, էջ 528], որոնց հետևում են ձերբակալություններն ու խոշտանգումները: Ցույցի կազմակերպման գործում մեծ դերակատարություն ունեցած շատ գործիչներ, այդ թվում՝ Մ. Տամատյանը, ստիպված գաղտնի հեռանում են Կ. Պոլսից [19, էջ 26]: 1895թ. Չեյթունի ապստամբության շրջանում Բուլղարիայում ապաստանած Տամատյանը կենտրոնից հրահանգ է ստանում տեղի հայերի շրջանում հանգանակություն սկսել: Ոստիկանությունը, որ պարզել էր նրա ինքնությունը, շուտով ձերբակալում է նրան և շոգենավով ուղարկում Կ. Պոլիս:

Տեսնելով նավախցում սեղանիկի առջև ազուցված երկու ձեռքերին հենված Տամատյանին (այս դիրքը մաստնական բառապաշարում նշանակում է՝ ես օգնության կարիք ունեմ) մասոններ նավապետն ու նրա օգնականը սխալմամբ կարծելով, թե նա էլ է մասոն, վտանգելով իրենց կյանքը՝ օգնում են Տամատյանին և մեկ այլ շոգենավով ապահով հասցնում Աթենք: Գոյության մի քանի տարիների ընթացքում Հնչակյանների գործունեության մեջ տեղ էին գտել մի շարք սխալներ, որոնք հանգեցրել էին տեղական մասնաճյուղերի դժգոհությանը և նոր խորհրդաժողով գումարելու պահանջի:

Շուտով տարբեր երկրներից Լոնդոն են ժամանում հնչակյան շատ գործիչներ, որոնց

թվում նաև Մ. Տամատյանը: Գրեթե բոլոր արևմտահայ գործիչները դժգոհում էին կուսակցության որդեգրած սոցիալիստական գաղափարախոսությունից, ցուցադրական գործելաձևից և հանուն հեղափոխության հանգանակված գումարների անհարկի ծախսումներից, իսկ երբեմն էլ՝ դրանց անհայտ ճակատագրից: Երկար բանավեճերից հետո վերջիններս առանձնանում են և 1898 թ. հոշակում նոր՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման մասին: Սակայն ճիշտ չհամարելով Ա. Արփիարյանի և այլ թիմակիցների մոտեցումները Մ. Տամատյանը հրաժարական է ներկայացնում: Սակայն նախկին ընկերները երբեք «չդադրեցան միշտ նկատել Տամատյանը իբրև անկեղծ ազգային գործիչ մը, որուն խորհուրդներուն կղիմեյին հաճախ իրենց համերաշխաբար առած քայլերուն առթիվ» [8, էջ 104]:

Որոշ ժամանակ անց Եգիպտոսի և Ամերիկայի վերակազմյալները Մ. Տամատյանին դիմում են կոչով՝ վերադառնալ և ղեկավարել Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Չմերժելով՝ 1906թ. ութ տարվա մեկուսացումից հետո նա կրկին համալրում է կուսակցության շարքերը: Կուսակցության չափավոր (ազգյան) թևը նրա գլխավորությամբ “տարբերությու մը չտեսնելով դրանց հայացքներուն միջև” [5, էջ 107], բանակցություններ է սկսում Գաղափարակցական միության հետ միավորվելու համար: Արդյունքում ստեղծվում է նոր՝ “Միացեալ հայ հեղափոխական կազմակերպությունը”, որին սակայն վիճակված չէր երկար գոյատևելու: 1908-ի երիտթուրքերի հեղաշրջումից և սահմանադրության հոշակումից հետո Եգիպտոսի հայ քաղաքական կազմակերպությունները (բացի ՀՅԴ-ից) բանակցում և հիմք ընդունելով Մ. Տամատյանի մշակած ռամկավարական ծրագիրը՝ “Մալեգեանի ծրագրին կարգ մը կետերուն հավելումովը” [20] 1908 թ. հոկտեմբերի 26-ին հոշակում են նոր՝ Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ծնունդը: ՀՍԴԿ-ի աշխարհայացքի հիմնադրույթները պարզաբանելու և մատչելի ներկայացնելու համար Մ. Տամատյանը 1910թ. Հրատարակում է երկու մասից բաղկացած “Ռամկավարություն” շահեկան աշխատությունը [21]:

Կուսակցաշինության ու ստեղծագործական բուռն գործունեությանը զուգընթաց Մ. Տամատյանը կարևոր դերակատարություն է ունենում Եգիպտոսի Ազգային միության, Կամավորական շարժման ու Հայկական լեգեոնի ստեղծման և վերջապես Ազգային պատվիրակությանը բոլորանվեր ծառայելու գործում: Որպես Մեծ երազի իսկական նվիրյալ և իբրև Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ նա իրեն բավականին լավ դրսևորեց 1918թ. Իտալիայում: Սակայն Մ. Տամատյանի բազմա-

բեղուն հեղափոխական կենսագրության լուսապսակը նույն կարգավիճակում եղավ 1919-1920 թթ. գործունեությունը Կիլիկիայում և հատկապես 1920 թ. օգոստոսի 4-ին Կիլիկիայի անկախ հանրապետության հռչակումը⁶:

1919 թ. գալով Կիլիկիա, շնորհիվ խելացի, հավասարակշռված ու բանիմաց գործունեության այստեղ շատ արագ նա շահում է տեղի հայ և ոչ հայ քրիստոնյաների, ինչպես նաև ոչ թուրք մահմեդական բնակչության վստահությունն ու համակրանքը: Ֆրանսիական իշխանությունները տեղի բնակչության օգնության ակնկալիքով խոստումներ էին շռայլում, մասնավորապես հայերին՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո հայկական պետություն ստեղծել: Իրականում սակայն Ֆրանսիան Կիլիկիայում հաստատվել էր ոչ թե վերջիններիս պաշտպանելու, այլև տարածաշրջանում իր գաղութային քաղաքականությունն իրագործելու նպատակով: Առաջնորդվելով այդ թյուր մտայնությամբ և իրատես չգտնվելով՝ Ադանայի ազգային խորհուրդը Մ. Տամատյանի գլխավորությամբ կարծում էր, թե Ֆրանսիայի շահերը պահանջում են հանդես գալ Հայ դատի պաշտպանության դիրքերից՝ չկամենալով նկատել ֆրանս-քեմալական մերձեցումը և դրա հետ կապված վտանգը:

Ի վերջո այլ ելք չտեսնելով և ցանկանալով Թուրքիային ու Ֆրանսիային կատարված փաստի առջև կանգնեցնել, **1920 թ. օգոստոսի 4-ին** Հայոց ազգային միությունը, բոլոր կուսակցությունները և քրիստոնյա համայնքների ղեկավարները հռչակում են Կիլիկիայի անկախ քրիստոնեական հանրապետություն՝ Ֆրանսիայի գերիշխանության ներքո: Նույն օրը Մ. Տամատյանի վարչապետությամբ կազմվում է կառավարություն, որը հաստատվելով Ադանայի նահանգապետարանում՝ անցնում է իր պարտականությունների իրականացմանը: Սակայն ֆրանսիական իշխանությունները զենքի ուժով ցրում են այդ կառավարությունը և առիթից օգտվելով սկսում են ճնշումները կիլիկիահայերի նկատմամբ: Ու թեև «Տամատեան անախալական չէր, ժողովուրդը այդ հայրենասեր մարդուն հրեղեն շունչովը գօտեպնդուեցաւ և ինքինզքը փրկեց ամբողջական փճացումէն, ինչ կ'անմահացնէ Տամատեան անունը [22]» շեշտում է ժամանակակիցը:

Եզրակացություններ.

1. Մ. Տամատյանը մեծ ներդրում է ունեցել մատաղ սերնդին նորովի կրթելու, դարավոր ընդարմացումից և ստրկական վիճակից դուրս բերելու կարևոր գործում:

2. Մ. Տամատյանը կարողացավ Եվրոպայում տարածում գտած ազատագրական գաղափարները “տեղափոխել և ներդնել” արևմտահայ իրականություն և դրանց ոգով դաստիարակել մի ողջ սերունդ:

3. Անմնացորդ նվիրումով և որևէ դժվարությունից չընկրկելով նա եղավ ազատագրության դրոշը բազմաչարչար հայոց հողի վրա պարգած Արմենական և Հնչակյան կուսակցությունների համակիրն ու ակտիվ գործիչը:

4. Գաղափարի, խոսքի ու գործի վարպետը միշտ հավատաց և իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց հայության Մեծ երազն իրականացնելու՝ հայոց պետականությունը վերականգնելու գործին, որի լուսապսակը եղավ իր վարչապետությամբ 1920 թ. Կիլիկիայի Հայկական Հանրապետության հռչակումը:

5. Հայոց պետականության անսակարկ նվիրյալը հետագա տարիներին ևս բոլորանվեր ծառայեց իր ժողովրդին, արեց ամեն ինչ հայ քաղաքական ուժերը համախմբելու-մեկտեղելու, Միյունքում հայապահպանության, նոր կրթարաններ ստեղծելու, Հայրենիքի շուրջ համախմբվելու, մամուլի նոր օրգաններ հիմնելու, օտարածին ուժերի դեմ գաղափարական պայքար մղելու և այլ կարևոր գործերում:

6. Երախտապարտ հայ ժողովուրդը միշտ վառ է պահում նրա հիշատակը, բայց նաև հոգու տուրք ունի նրան տալու՝ նրա մասունքները պետք է Հայրենիք տեղափոխվեն և իր մեծությանը հարիր հուշարձան կառուցվի:

Օգտագործված աղբյուրներ և գրականություն ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆֆ. 160, 200, 282, 420, 430, 453, 1456:
2. Երվանդ և Նորա (Մ. Տամատյանի թոռնուհին) Ազատյանների ընտանեկան արխիվ:
3. Կահիրեի առաջնորդարանի դիվանատան արխիվ:
4. Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Ե., 2010, էջ 528:
5. **Տամատեան Մ.**, Իմ յուշերես, Պեյրութ, 1985, Ղազարեան Վ., Իբրեւ ներածութիւն Կիլիկեան երագին նաւորդը:
6. **Տեփոյեան Պ.**, Մեր մեծ ծերունին // “Արեւ” թերթ, թիվ 8145:
7. **Թովմասյան Բ.**, Միհրան Տամատեանի յուշագրութիւնը, ինչպէս սկսաւ եւ ինչու մնաց անաւարտ // “Արեւ” թերթ, թիվ 15706:
8. **Տեփոյեան Պ.** «Միհրան Տամատյան (1863-1945)», Գահիրե, 1956:

⁶ Այս շրջանում Մ. Տամատյանի վերաբերյալ պահպանվել ու մեզ են հասել մեծ թվով վավերագրեր, նամակներ, հուշագրություններում և մամուլում հրապարակումներ, որոնք գտնվում են աշխարհի հայաշատ մի քանի կենտրոններում և հավաքվելու, մեկտեղվելու և մշակվելու կարոտ կարիքն ունեն:

9. **Չելեպեան Ա.**, Յեղափոխական դեմքեր», Միշիկըն, 1991, 2-րդ հրտ., Մաուրֆիլդ, 1994:
10. **Կեօրկիզեան Ա.**, Մեր Ազգային Գոյապայքարը, 1915-1922ի զուլումի տարիներուն, Պէյրութ, 1967:
11. **Ճիզմէճեան Մանուկ Գ.**, Պատմութիւն Ամերիկահայ Զաղաքական Կուսակցութեանց. 1890-1925, Ֆրէզնօ, 1930:
12. **Թերզեան Ս.**, Հանրնի ութամսայ դիւցազնամարտը, Բ. Հրատարակութիւն, Պուենոս Այրէս, 1956:
13. **Ա. Յ.**, Գերընտիր հայ մը // “Արեւ” թերթ, թիվ 8145:
14. **Տեփոյեան Պ.**, Մեր մեծ ծերունին // “Արեւ” թերթ, թիվ 8145:
15. “Դրօշակի” նամակը Մ. Տամատեանին, Ռոստոմ Նամականի, մահուան վաթսունամեակին առթիւ, իմը. Հր. Տասնապետեան, Պէյրութ, 1979:
16. **Սարգսյան Ս.**, “Արմենիա” պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014:
17. **Հէվրովիի Կարօն** (Բարը Ալիի ղեկավարներից էր), Միհրան Տամատեան (անձնական յիշատակներ) // “Արեւ” թերթ, թիվ 5630:
18. **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Ա. Հատոր:**
19. **Ճերեճյան Ե.**, Ս. Վահագն (Գրիգոր Նալպանտեան), Պէյրութ, 2017, էջ 26:
20. **Դարբինեան Ա.**, Վանը հայ ազատագրական շարժման մեջ // “Նոր օր” թերթ, թիվ 48, 23 հունիսի 1965:
21. **Տամատեան Ս.**, “Ռամկաւարութիւն”, Ալեքսանդրիա, 1910:
22. **Մալեզեան Վ.**, Գերեզմաններու առջեւ // “Լուսաբեր-Արեւ” թերթ, թիվ 814, 1910:
23. “Արեւ” թերթ, 8145, 15706: 5630, 1937 և այլ համարները:

*Տժանա/Հանձնվել է՝ 25.11.2020
 Рецензирована/Գրախոսվել է՝ 27.11.2020
 Принята/Ընդունվել է՝ 30.11.2020*